ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 օգոստոսի, 2016 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ահաւասիկ կամ աղախին Տեառն»
(Ղուկ. Ա. 38):

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին այսօր տոնախմբում է հիշատակությունը դարեր առաջ տեղի ունեցած մի իրողության, որ առնչվում է մեր Տիրամայր եւ համաքրիստոնեական Եկեղեցու մեծագույն բարեխոս սրբերից մեկի՝ Աստվածամայր Ս. Կույսի՝ դեպի երկինք վերափոխման իրադարձության հետ: Հայոց Եկեղեցին դարերի ընթացքում մշտապես անդրադարձել է Աստվածամորը՝ իբրեւ մարդկային ցեղի, մայրության, Աստծո խոսքի հնազանդության գերագույն եւ կատարյալ օրինակի: Աստվածամորը ընծայվել են բազմաթիվ ստեղծագործություններ՝ տաղեր, գանձեր, հոգեւոր երգեր, շարականներ, ինչպես նաեւ սրտաբուխ եւ հոգեսնուցիչ աղոթքներ: Մեր ժողովուրդը մշտապես անդրադարձել է Աստվածամոր կերպարին եւ նրա արժանավորությանը, ով իր մանուկ հասակից ընծայվել էր Աստուծո Տաճարին, այնտեղից հոգեւոր կյանքի իմացականության լույսով սնվել ու հասակ առել եւ իր կյանքի տասնվեցերորդ տարում արժանացել Տիրոջ հրեշտակի այցելությանը:

Ավետման դրվագում ավետարանիչը պատմում է հրեշտակապետի ու Ս. Կույսի երկխոսությունը. Աստուծո պատգամաբեր հրեշտակը նրան բարի ավետիսն էր բերել, թե նա պետք է ծնի համայն մարդկության Փրկչին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Պատգամի ավարտին Աստվա-

ծամայրը՝ խոնարհ, հնազանդ, հեզ, մաքուր եւ սուրբ, շատ կարեւոր մի արտահայտություն է անում՝ ասելով. «Ահավասի՛կ, ես Տիրոջ աղախինը կամ եւ պիտի մնամ» (Հմմտ. Ղուկ. Ա. 38):

Եթե առաջին կնոջով՝ նախամայր Եվայով, մեղքը եւ դատապարտությունը մտան մարդկային կյանք, ապա Աստվածամոր կերպարով (երկրորդ Եվա) ուղենշվեց մարդկության փրկության ճամփան: Աստվածամոր մեծությունը, սիրելի՛ հավատացյալներ, ոչ միայն այն կարեւոր դրվագում է, որ Աստվածածինը աշխարհ բերեց, իր մարմնի հետ միախառնեց Աստծո Ս. Հոգու այցելությունը եւ դարձավ այն ոսկի տապանակը, որտեղից հայտնվեց համայն մարդկության բանականության ճշմարիտ Լույսը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ իբրեւ փրկություն, ճանապարհ եւ հավատքով հավիտենական կյանքը ժառանգելու ճշմարիտ դուռ, այլ նաեւ արժանավորությունն իր զավակի կյանքում: Հիշենք աստվածաշնչյան այն հատվածը, թե ինչպիսի դառնությամբ էր լցվել Աստվածամոր հոգին, երբ կորցրել էր տասներկուամյա զավակին, մինչեւ որ տաճարում գտնվեց, ինչպիսի մայրական գորովով, խոնարհությամբ Աստվածամայրը հետեւեց Տիրոջ խաչելությանը՝ ընկալելով Նրա զոհողության, խաչի, փրկության եւ սիրո Ավետիսը: Աստվածամայրը, սիրելինե՛ր, մշտապես ներշնչեց մեր ազգին ու բարեխոսեց մեզ համար:

Հայ Եկեղեցին Աստվածամորը նվիրված յոթ տոն ունի, որից այս մեկը, իբրեւ մեծագույն, նշվում է հինգ Տաղավար տոների շարքում: Երեկ մենք հիշատակեցինք մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի՝ այս կաթողիկեի հիմնադրության ակունքը հանդիսացող Շողակաթի տեսիլքը: Այսօր ամենքս Վերափոխման տոնին ուխտով եկել ենք այս կաթողիկե Մայր Տաճարը՝ Հայ Եկեղեցու Մայր Աթոռը, որպեսզի մեր խոնարհությունը բերենք Աստվածածնի անունով կնքված այս խորանին, որտեղից Ս. Պատարագի խորհրդով դարձյալ պիտի կենդանանա այսօրվա հիշատակությունը՝ մեր Տերը պիտի ծնվի ու առատորեն բաշխվի ամենքիս կյանքում Հաղորդության Ս. խորհրդով՝ սիրո ճաշակումով, այն սիրո, որ մեր կյանքը պետք է ամբողջությամբ վերափոխի, մեր անձը աղոթքով սրբագործի եւ հաստատի միությունն մեր եւ Աստծո միջեւ, որովհետեւ ինչպես Եվայի մեղքի ճանապարհով խզում եւ զատում եղավ մեր՝ մարդկության եւ Աստծո մերձենալիության, այնպես էլ Աստվածամոր կերպարով, նրա միջնորդական եւ բարեխոսական շարունակական ազդեցությամբ շնորհ ենք ստանում՝ դառնալու Աստծո ճշմարիտ տաճարներ՝ մեր անձնական կյանքը կերպարանափոխելով եւ վերափոխելով: Աստվածա-

Ես իսկ եմ հարություն եւ կյանք. ով հավատում է ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի.
եւ ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի (Հովի. ԺԱ. 25)

Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը: Ով բնակվում է իմ մեջ,
եւ ես՝ նրա մեջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետեւ առանց ինձ
ոչինչ անել չեք կարող (Հովհ. ԺԵ. 5)

մայրն իր մարդկային կերպարով մահից հետո ապականություն չտեսավ. նրա Միածին Որդին իջավ երկնքից եւ նրան երկրից վերափոխեց երկինք:

Այսօր էլ, սիրելի՛ հավատացյալներ, ամենքդ ուխտավորաբար այցելե՛ք Երուսաղեմ՝ Աստվածամոր գերեզմանին, եւ կտեսնեք, որ այնտեղ չէ Աստվածամայրը, այնտեղից վերափոխվել է երկինք՝ իր Միածնի առաջնորդությամբ: Ուրեմն՝ Աստվածամայրը մեզ ամենքիս իր կյանքի կարեւոր պատգամներից մեկն է փոխանցում՝ Աստծո խոսքին, Ավետարանի պատվիրաններին կատարյալ հնազանդությամբ եւ հավատարմությամբ կյանք: Այս է կարեւոր պատգամը՝ վերափոխում ունենալու մեր կյանքում: Եթե մենք լսենք Աստծո կանչը, եթե քայլենք դեպի Աստված, եթե մտնենք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցիներ եւ այնտեղ այդ խնդրելու, փնտրելու, աղերսելու աղոթասաց ձայնով միավորվենք, կապահովենք մեր կյանքի միությունը Տիրոջ հետ: Սա է քրիստոնյայի կյանքի ճամփան:

Եւ այսօր, սիրելինե՛ր, մենք եկել ենք այս սրբազան Տաճար՝ մեր ուխտը նորոգելու Ս. Պատարագին մասնակցելով, որի ավարտին, Հայ Եկեղեցու դարավոր ավանդույթի համաձայն, պիտի կատարենք մեր երկրի առաջին հասունացող պտղի՝ խաղողի օրհնությունը, որպեսզի խաղողի հյութով պատրաստված գինով մեր Տերն իջնի Հաղորդության Ս. խորհրդի մեջ եւ սրբագործվելով՝ առատորեն բաշխվի քրիստոնյաներիս՝ որպես կատարյալ փրկություն: Օրհնելով խաղողը՝ օրհնում ենք նաեւ հայոց հողը, որպեսզի այն բերրի լինի, ապահովության մեջ լինեն մեր հայրենիքի սահմանները, մեր կյանքը, որպեսզի քրիստոնեական գիտակցությամբ հանդիպեն ողորմությունն ու ճշմարտությունը, ինչպես Դավիթ մարգարեն է ասում իր սաղմոսում (հմմտ. Սաղմ. ՁԴ. 11): Եւ եթե այնպես պատահի, որ մեր կյանքում ողորմությունն ու ճշմարտությունը հանդիպեն, ապա այնտեղ՝ մեր կյանքում կթագավորեն արդարությունն ու խաղաղությունը:

Եկե՛ք այսօրը պարզ գիտելիքի եւ հիշատակության սահմանից իրական վերափոխման տոնի վերածենք: Եկե՛ք աղոթենք, որ Աստվածամայրը դառնա մեր բարեխոս եւ միջնորդ մայրը, որպեսզի այդ միջնորդության եւ բարեխոսության արդյունքում մեր Տեր եւ Փրկիչը թագավորի մեր կյանքում, եւ այն դառնա Տիրոջ փառաբանության ճշմարիտ ընթացք:

Աստվածամոր մշտամնունջ բարեխոսությամբ թող Տերը ամենքիս պարգեւի շնորհք, սեր եւ խաղաղություն այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: